


ՏՆՕՐԵՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԱՐ

Նամակ կամ ուր եւ գրութիւն
պէտք է ուղղել առ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼԵՍԳՐԻ
Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի համար տրեկին. ողջ դճ. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ տրեկին Գրանի 25
» » վեցամսեայ » 14
Քղրասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեանն ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ՈՒԹ ՀԱՐԻԻՐ
ՀՐՈՒՇԻ ՀԱՄԱՐ

Աղեքսանդրիոյ միահեծան թաղական
խորհուրդը ապահովապէս վարդէ անկողնի մը
վրայ չի գտնուիր այս պահուս:

Բողոքները ամեն կողմէ կը տեղան, —
թաղականները աղէկ չեն խնամել կոր դաղ-
թականները, ժառանգական խնդիրներու մէջ
անարդարանալի յապաղումներ տեղի կուգե-
նան կոր, եկամուտները՝ իրենց նպատակին
համեմու համար օձապոտոյ ճամբաներէ կանց-
նին կոր, թաղականութիւնը այս կամ այն
անձին վրայ կեղծողնայած է, դպրոցները ուզ-
ւածին չափ կանոնաւոր չեն, աղղին որբերուն
համար բան մը ընելու համար բաւական փութ-
կոտութիւն ցուցունով չկայ, եայլն եայլն:

Ասանց արձագանգը մինչեւ մեր խմբագ-
րատունը բերողներ կան: Սակայն մենք որ
թաղականները անհատապէս կը ճանչնանք եւ
անոնց պատուաւորութիւնը երբեք կասկածի
տակ չենք դրած, բնականաբար չենք կրնար
կարեւորութիւն ընծայել ամեն ըսուածին եւ
տեղ մը տալ մեր թերթին մէջ այդ տեսակ
զրոյցներու որոնք կրնան իրականէն շատ տար-
բեր ըլլալ:

Թաղականները կը նմանին աղւոր կնիկան
մը որ ամեն մարդու երեսին չի կրնար ինդալ
եւ հետեւաբար իր պաշտօններու թւոյն չափ
թշնամիներ ալ կրնայ համբել:

Թաղականութիւնը եւ բամբասանքը երկ-
ուրեակ քոյրեր են: Այս ընդհանուր կանոն
մէն է որուն մէջ Աղեքսանդրիոյնը բացա-
ռութիւն չի կրնար կազմել:

Աղեքսանդրիոյ եւ արիշ տեղերու թա-
ղականութեան մէջ եթէ տարբերութիւն մը
կայ, այն ալ սա է թէ արիշ տեղի աղաները
երբ գանգատի մը կամ բողոքի մը տեղի կու-
տան, անմիջապէս կը փութան մօքերը լու-
տարանել, ըրածնին պատճառաբանել եւ զրոյց-
ները ցրուելու ջանքեր ընել:

Սա ալ չի մոռնանք թէ հոս տեղի թա-
ղականները բացառիկ դիրքի մը մէջ կը գըլու-
նուին:

Ինչպէ՞ս կուզէք որ անոնք բացատրութիւն
տային այս ինչ կամ այն ինչ խնդրոյն մէջ, երբ
միջոցները բոլորովին կը պակսէին իրեն: Մին-
չեւ այժմ լրագրութիւն չի կար հոս եւ շատ
ծիծաղելի բան պիտի ըլլար եթէ ամեն ան-

հաւանաբար անոնք մեր թա-
ղականութեան հետ չափ կեր-
պով չարարութիւններ: Եւ եթէ ի նկատի
առնենք թէ թաղականները օրը 24 ժամ
եկեղեցիի խնդրով չեն կրնար զբաղել եւ միւս
կողմէ եթէ ընդունին որ անանկ մարդիկ կան
որոնց բանը գործը թաղականները քննադա-
տել է, ամեն պարագայի մէջ, ամեն տուն
— յախտնական բողոքողներ — այն տուն պի-
տի տեսնենք թէ իրաց արդի վիճակը ինքնին
յառաջ եկած է եւ երկու կողմն ալ արդարանա-
լի պատճառներ ունին:

Բայց խնդիրներ ալ կան որոնց մէջ Ա-
ղեքսանդրիոյ թաղական խորհուրդը շատ քնն-
նադատելի ճամբայ մը բռնած է: Ասէ՛ք օրի-
նակի համար գերեզմանատան խնդիրը որուն
դէմ ոչ թէ միայն այդ քաղաքին հայերը,
այլ ամբողջ հայութիւնը կրնայ դժգոհ մնալ
եւ իրաւամբ:

Գերեզմանատուն մը կամ անոր մէկ մա-
սը նուիրական որքան եկեղեցին եւ թերեւս
քիչ մ'ալ աւելի. չի կրնար վարձու տրուել,
ինչ նպատակի համար կուզէ թող ըլլայ. եւ
որ աւելին է, չի կրնար հասցիլի աղբիւր
մը ըլլալ որ եւ է մէկուն, մանաւանդ օտարի
մը, աղաղակի մը համար:

Դժբաղդաբար իրողութիւն մ'է այս:
Աղեքսանդրիոյ capricieux թաղական ա-
ղաները 800 դրուշի համար գերեզմանատան
մէկ մասը վարձու տուած են արապի մը որ
այդ հողը բանջարանոցի վերածած է:

Գերեզմանատունը իսպառ կըրուած գու-
մը ունի. որպազդութիւն չէ՞ խաչին ետին
առեւտուր ընել:

Մեր մեռելները — մեր ամենուր սիրելի,
նուիրական, պաշտելի հոգակոյտները — ինչո՞ւ
կուզէք որ արապը կոխկրուէ անցնի, անոնց
վրայ իր սպրանքը ծախէ, անոր քով իր սա-
կարկութիւնը ընէ. հետեւաբար, ստէ, հայ-
հոյէ եւ արապդժէ: 2է', այս չի կրնար ներե-
լի ըլլալ մինչեւ իսկ 8000 ոսկիի համար:

Աւելի զարմանալիս կուզէ՞ք իմանալ:
Այն արապը որ գերեզմանատունը վար-
ձած է, պարտի ինք թաղել մեր մեռելները,
այսինքն հայ մը գերեզման իջած պահուն՝ իս-
լամի մը ձեռքէն պիտի անցնի:

Այս՝ ա'լ աւելի ներքին չէ:
Ինչո՞վ կրնայ արդարանալ թաղական
խորհուրդը այս արարքներուն համար: Շատ

չատ պիտի ըսեն թէ այդ գործէն՝ եկեղեցին
800 դահեկան շահ ունի:

Տղա պատասխան կ'ըլլար տախկայ: Եթէ
այդ ճամբան ընել գաղապարտելի չըլլար,
մենք պիտի համարձակէինք տարեկան 250
ոսկիի վարձել թաղ խորհրդարանը... պարա-
սրահի վերածելու համար:

Աղեքսանդրիոյ Պատ. Թաղ. Խորհուրդը
թող ներէ որ իրեն պատիկ խորհուրդ մը
տանք:

Վաղուրնէ, այսօրուրնէ իսկ, գերեզմա-
նատան չըլտիակէն դուրս հանելու է վարձա-
կայը, անոր տեղը հայ մը դնելու է եւ մի-
անգամ ընդմիջող գերեզմանատունը՝ մինչեւ
իսկ անոր մէկ կանգունը՝ վարձելէ հրաժա-
րելու է:

Կը կարծէք թէ Խոնուի, Չմշկածակի եւ
կամ Գանատիլի խեղճուկ եկեղեցիներու, որոնք
անշուշտ գերեզմանոցներ ալ ունին, թաղա-
կանները այստեղի աղաներուն չափ չեն խնա-
մեր մեր նուիրական վայրերը եւ կամ անոնց
չափ գործի մարդիկ չեն:

Մենք ընաւ կասկած չունինք թէ թաղ-
խորհուրդը իրաւունք պիտի տայ մեր ըսածին
եւ անմիջապէս վերջ մը պիտի դնէ այս գայ-
թականութեան որուն մէջ իր գերը — կը սի-
րենք յուսալ — բալորովին անփորձութեամբ
խաղաղած է մինչեւ այժմ:

4. ՊՈԼՍԷՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն յունիս 29 թուականով կը հե-
ռագրեն Սղանճաւոյն:

Թոքաթէն յունիս 18 թուականով պալատ հա-
տած հեռագիր մը կը ծանուցանէ թէ այն վայրկեանին
երբ իշխանութիւնը կը պատրաստուէին կախաղան
հանել մարտ 19-ի կատարածին մէջ մեղաւորութիւն
ունեցող գաղտնաւորները, իր 500 հոգիէ բաղ-
կացեալ բազմութիւն մը, ամենքն ալ զինուած, կա-
ռավարչին բնակարանը զիւրաւ պահանջեցին որ
գաղտնաւորները ազատ թողնին: Կատարուի-
չը եւ արտասովոր գաղտնաւոր անդամները չի յա-
ջողելով խռովարարները հանդարտեցունել հարկադ-
րուեցան գաղտնաւորներէն մէկ-երկուքը թողու-
թօքաթի իսլամները ետքէն հեռագիր մը ուղղել եւ
Սուլթանին, գրեթէ սա խնամով. «Ի՞նչ պատճա-
ռաւ Թոքաթի մարդասպանները պէտք է պատ-
ժուին, եւ Սըվապի, Կիւրիւնի կամ ուրիշ տեղերունը
անպատիժ մնան: Կամ՝ Զարեքը օրինաւոր էին
կամ ոչ. եւ եթէ չէին, հարկ էր նախ եւ առաջ այն
տեղերու կոտորածի հեղինակները պատժել, ուր
մեծագոյն խռովութիւններ ի գործ դրուեցան »

Դարձեալ Կ. Պոլսէն կը հաղորդեն եւրո-
պական թերթերուն:

Վերջորիմ թագուհւոյն յարեւմտեան աստիճանագրական հիւպոթոթարանէն արձակուած հրկիւններ շփոթութիւն առաջ բերին ի կալաթա և Պոլսոյ կողմը: Ոստիկանութիւնը ցրուեց համախառնած բազմութիւնը:

— Զրոյց կը շարունակէր ռուսական դեսպան Պ. Նելիսովն ախտի մեկնելու մօտոյ:

— Պետական վարչակարգի պաշտօնատարներու (յիւնոստրական, քաղաքային, կրօնական) գումարում մը տեղի ունեցաւ նախորդ շաբթուան պաշտօնական մէջ, թեալ խաչէն ելլելու հարցին վրայ խորհրդակցելու համար: Բանախօսութիւններ արտասանուեցան և ի վերջոյ բանաձեւ մը բուխարեցաւ՝ այդ նախադրեալէն հանելու գաղափարին դէմ, քաղաքական և կրօնային նկատմաներու վրայ հիմնուած, Այս բանաձեւ ներկայացուցաւ Սուլթանին որ զայն ժողովին վերադարձուցեր է՝ զեկուցանելով թէ, եւրոպայի նկատմամբ այսպիսի ընդգիծութիւն մը ինչ փոփոխութիւն կը նշանակուի: Ժողովը պատասխանեց թէ ինք վերահասու էր այդ փոփոխութեան, սակայն երկիրը պատրաստ կը նկատէր ամեն պատահականութեան դիմադրելու:

— Յունիս 29 թուականով կը հետադրեն Վ. Պոլսէն թէ կէս-պաշտօնական հրատարակելու ուղղութիւն են թուրքիոյ բոլոր գաւառները, հրապարակելու համար ամենէն հաւատարիմ ու արտօտ խառնուրդը Վ. Պոլսի գաղութ: 25,000 և աւելի անձինք պատասխանած են այս հրապարակումը և մարտադար եկած են բնակիչ:

— Հելլենական վաճառարան նաեւ Տար. տանէին անցնելու արդիւնք է թուրք կառավարութեան կողմէ:

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

Ամեն անգամ որ Կովկասեան մարտը կը գոծէ՝ քիչ չափ կարողութեան տէր հայր մը մտնէր, խիղճը կը հետեւի անոր բարեգործական կտակին մը յորը. կտակներ կան որոնց գումարները հարիւր հազար ռուբլիներով կը հաշուին եւ կտակներ՝ որոնք հարիւրով. իր մահէն ետք ազգին բան մը քողարկու գաղափարը արմատացած է, կրկնապէս, ռուսահայոց բարեգործական մեջ, գրեթէ անխառնափառ դարձած է ուրիշ տեղերու եւ մասնաւորապէս Կ. Պոլսոյ հայութեան մէջ՝ կտակները խափանել, չի գործադրել, մեկ խօսքով՝ մոռցուելու տալ, չի մոռցուելու տալով օրհնութիւններ ու պատիւներ շնորհել խափանարարին:

Այս անգամ ո՛չ քէ հարուստ մը, այլ գիտնական մը, գրագէտ մըն է որուն մահուան գոյծը կը հասնի Մակնալան: Գեորգ Բանասէտեան, Լազարեան ճեմարանի վերահսկողը, վախճանէր է յունիս 5ին: Երեսունը հինգ տարի է Վեր կը պաշտօնավարէր այդ կրթական բարձր հաստատութեան մէջ, յայտնաբերած բազմաթիւ գիտելիքներով Վերահսկողը: Մասնաւորապէս կը դասախօսէր արեւելեան ազգերու պատմութիւնը: Հանգուցեալ Բանասէտեան իր գրչով կը մասնակցէր, կը հետախուզէր ազգային ընդհանուր հարցերու, որոնց մասին շարք մը յորդանաններ հրատարակած է ռուսերէրէն մէջ:

Իր վերջին գրական երկասիրութիւնը որ դեռ յոյս չէ տեսած առանձին հաստատութիւն, կը վերաբերի հայերու ներկայ վիճակին: Կեանքի վերջին տարիները, երբ տարիքին ու հիւանդութեան տակ ընկճուած էր, գրիչը չի քողարկու Բանասէտեան:

Ուրիշ մը, իր տեղ, քաղաքական պիտի

սեպէր մտաւորական ու գրական ծառայութիւնները զորս կեդրականութեանը մասնացած է հանրային օգտին. ինքը՝ կրկնապէս երեսնասպիտակեան արժանի յիշատակ մը կը քողարկու, իր հարստութեան մէկ բաժինը, քանի մը հարիւր հազար ռուբլի, կտակելով ազգ. բարեգործական հաստատութեանը:

Այս գեղեցիկ օրհնակներ ետք արդեօք բարեխառն ազգեցորդին մը պիտի ունենան արեւմտեան հայերու վրայ, որ ռուսահայոց կտակներով կը պարծնէ: Գոնէ արդեօք յորիմն ունեցածները գործադրելու փորձ մը քողարկու:

ՀԱՎԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

— «Լաւութիւնը ոսկի է» կըսեն խառնատները, սակայն փաստարանները կը պնդեն թէ ոսկին շատ խառն է:

— Պատուով կը կրկնուի թէ զուտ ունեւորութիւն չէ, ստոր հակառակին է... մանկաբարձին համարումը:

— Գործարարները՝ մեծեղ ընդուն կը գովեն, աշխարհագրագետները՝ կենդանին, իսկ Եւրոպացիները՝... ծխածը:

— Կարճատեւ մարդիկ խոշոր կենցաղ կը սիրեն. բայց խոշոր կենցաղը երբեք կարճ մարդէն չեն տխրածիր:

— Քարոզ մը որ բոլոր կարճ ըլլայ այնքան մեծ ազդեցութիւն կընէ, իսկ որքան երկայն ըլլայ՝ այնքան քիչ:

— Տանտիրոջմէջ խնդրէ որ վարձը իջեցունէ, ապա՛հով եղի որ ամիս մը ետքը պիտի բարձրացնէ:

— Գինեւաճառները շատ ջարդ կը գործածեն, գինեւորները երբեք:

— Շատ մը մարդերու էջ կըսեն, որ մը խառնած էր որ էջը մը «մարդ» ըստին:

— Գեղեցիկ կործանք ունեցող կիները ընդհանրապէս գեղեցիկ սիրտ մը չեն ունենար, հակառակ իրարու այնքան մօտ ըլլալուն:

ՌԱՏԱՄԵՍ

ԱՐԵՆԱԿԱՆ ՆՈԹԵՐ

Ե.

ԵՎԵՐԳԵՐՆԵՐԸ

Աթէնք կընայ Եւրոպայի ամենէն սիրուն քաղաքներէն մին համարուել: Մէկ ծայրէն միւսը բոլորովին նոր շինուած քաղաք մըն է որ ամէն քառասուն յիսուն տարի առաջ գրեթէ ընտել գոյութիւն չունէր: Շաթապուիան երբ Աթէնքը այցելեց՝ խեղճով գեղ մը գտաւ ինչպէս նաեւ Լամաթին: Յունական անկախութեան հոգը, երկար ատեն, աչքի զարնելիք միակ շէնքը արքայական պալատը եղած է ամբողջ քաղաքին մէջ:

Հիմայ 120,000 բնակիչներով խոշոր քաղաք մը տարածուած է Ակրոպոլիսի ստորոտը, լայն՝ ծառայարդ փողոցներով եւ հանրային ու անհատական գեղեցիկ շէնքերով. տեղ տեղ կան ընդարձակ squareներ ու իրիկունները զինուորական նուազածութիւններ կըլլան:

Առաջին անգամ երբ մարդ Աթէնք մտնէ կը զարմանայ թէ Յունաստանի պէս աղքատ կառավարութիւն մը ինչպէս կրցած է միլիոններ ծախսել պալատի մայրաքաղաք մը ունենալու համար և երբ ստոր գաղտնիքը հարցնէ Աթէնացի մը, սա պատասխանը կ'ունէ.

— Կառավարութեան ինչ Աթէնքի համար եղած ծախսերը, եվրոպացիները ողջ ըլ-

լան: Ո՛չ կառավարութիւնը, ո՛չ թաղապետութիւնը ստակ մը չեն ծախսեր ու չեն ծախսած քաղաքին համար:

Արդ, ինչ է եվրոպացի:

Եվրոպացի այն յոյն ազգաւոր բարերարն է որ շատ անգամ օտար երկրի մը մէջ կը ծնի, կը մեծնայ, կապի, Յունաստանը կամ Աթէնքը ընտել չտեսնել, բայց օրին մէկը ահա՛ քանի մը միլիոն տրախմի կը նուիրէ որպէսզի Աթէնքի մէջ դպրոց մը, թանգարան մը, թատրոն մը կամ... փողոցին սալապատակները շինուին: Աթէնքի փողոցներուն բոլոր մայրերը Սինկրոսի քակէն շինուած են:

Յիշենք հոս այդ բարերարներէն մէկ քանի մը գործերը:

Բանաւորութեան և Եվանկելիս Զաքար, բնիկ Եպիւրոսի և Ռումանիա հաստատուած մեծահարուստ յոյները, երեք միլիոն տրախմի ծախսելով՝ շինած են հոյակապ շէնք մը Ոլիմպիական Արամազդի տաճարին մօտերը: Այդ շէնքը կը ծառայէ իրեն ինչպէս արուեստահանգէս զուտ յունական արտադրութիւններու: Այս արտադրութիւններուն գլխաւորներն են միշտ Սանթորէնի գինին, Բանթէլիքի մեղրը, Թրիբոլիցիայի գորգերը և անխառնափառ Մեթաքսա եղբայրներու քօնեալը:

Համալսարանը, որ գեղեցիկ շէնք մըն է հին յունական ոճով, հանդանակութեամբ շինուած է: Համալսարանի չորս մասերուն մէջ կառանդուին իրաւագիտութիւն, բժշկութիւն, գրականութիւն և Աստուածաբանութիւն: Երեք հազարէն աւելի ուսանող ունի, որոնց երկու հազարը իրաւագիտութեան և բժշկութեան ճիւղերուն կը հետեւին:

Համալսարանին դէմը կը գտնուի բնական գիտութիւններու թանգարանը որ նոյնպէս անհատական նուիրատուութիւններով հաստատուած է:

Համալսարանին երկու կողմերը կը բարձրանան երկու հոյակապ շէնքեր, մէկը Ազգային Մատենադարանն է որ դեռ նոր աւարտելու վրայ է և որուն համար Բենիֆալիսի մը Պ. Վալիանոս որ Մարտիլ կը բնակի, վեց միլիոն ֆրանկ ծախք բրած է: Մարմարաշէն հսկայ շէնք մըն է, Գորիական սիւներով, ընդարձակ գետնի մը վրայ:

Միւս շէնքն է Ակադեմիան՝ զոր Վիեննացի աշխուսական մը, պառօն Սինա, իր քրտակէն շինած է: Ամբողջ շէնքը Բանթէլիքի մարմարով կառուցուած է, հին յունական ճարտարապետութեան նմանութեամբ, յոյնական սիւներով: Ճակատը կը զարդարեն տրճաններ և ոսկեզօծ ու դանդաղ նկարներ: Այս շէնքը կընայ նոր Աթէնքի ամենէն փայլուն յիշակերտը համալսարան: Եվրոպայի առջին կը բարձրանան երկու մեծ սիւներ որոնց վերայ կանգնուած են Աթէնասի և Ապոլլոնի արձանները: Մուտքին երկու կողմն ալ, նրոտած գիւղի մէջ, կ'երեւան Պլատոն ու Սոկրատ:

Աղջիկներու մեծ վարժարանը, ուր 1500 աշակերտուհի կը յաճախեն, շինել տուած է Պուրքիցի հարուստ Յոյն մը Պ. Արաքիս:

Բաթիսիայի ճամբուն վրայ կայ նաեւ մեծ ու հոյակապ վարժարան մը, Բաղմարուստեան վարժարանը: Այս շէնքը կը գրաւէ 5400 մեղր տարածութեամբ ընդարձակ գետնի մը

և ամբողջ Բանկէի իմաստը կառուցուած է : Միջոցները վճարած են Մեցովայի (Եպիսկոպոս) Պ. Սթուպանսկի, Պ. Թոսիցա և իր այլքին : Այս դպրոցի գեղարուեստի բաժնին մեծ սրահին մէջ կը գտնուի հայադպի մեծանուն նկարիչ Պ. Ալեքսանդրիի հրաշալի մէկ ծովանկարը , որ կը ներկայացնէ յունական անկախութեան պատերազմի մեծագոյն հերոսը՝ Գրիգորիոս եղբայր Գրիգորի առջեւ Քաթիթան փաշայի նաւուն կրակ տալէ յետոյ , կը փախչի պղտիկ մակոյկով մը :

Հնութիւններու թանգարանը , որ նոյնպէս հոյակապ ու գեղեցիկ շէնք մըն է , Ս. Բեդերպուրկցի Յոյնի մը , Պ. Պետրոսեանի առատաձեռնութեամբ շինուած է :

Վերջապէս չի կայ հանրային շէնք մը որուն վրայ էջերգեղի մը անունը քանդակուած չըլլայ :

Մեծ թատրոնը Պ. Սիւկիւրոս շինած է , աստղաբաշխական գիտարանը՝ պատն Սինա , մեծագոյն Լիսէն՝ Պ. Վարվարիս , Գէֆիտայի կղերանոցը՝ Պ. Ռիցաուիս , մանկերու որդանոցը՝ Հաճի Գոսթա : Ինչպէս վերը ըսի , փոփոցոյն սալայատակները անգամ էջերգեղները շինած են :

Ալեքսանդրիայի մեծահարուստ Յոյնը , Պ. Ալեքսոֆ մինչեւ հիմա չորս միլիոն ֆրանկ տուած է Ոլիմպիական խաղերու մրցումներին՝ Սթատիոնի՝ շինութեան համար և դեռ կէսը հազիւ աւարտած է շէնքին :

Էջերգեղներն են նաեւ որոնք շինած են՝ Կեղերական բանտը , անդամների հիւանդանոցը , թիւներու ինստիտուտը , ընկերիկ մանուկներու պատապարանը , ձիաուր զօրքերու զօրանոցը , ջուրի ճամբաները , Աթէնքի կոյուղին . . . :

Մենք ալ ունինք էջերգեղներ որոնք որբերը կ'որգեգրեն՝ ձրի ծառայ ունենալու համար : **ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ**

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Որբախնամ Գանձաժողովն իր վերջնական կազմակերպութիւնն ստացած է հետեւեալ կերպով .

Տեսքը		
Բիւռ	Բոլատ	Ասեմապետ
Մոլոկո	Անանեանց	Ասեմապետ
Յովհաննէս	Ետրեան	Գանձապետ
Բարթիկ	Նախագետներ	
Երուանդ	Ազատեան	
Մկրտիչ	Պալարճեան	
Սեդրաք	Գալիթեան	

Գանձաժողովն իր նիստերը պիտի ընէ հայ Ընթերցատան սրահին մէջ ուր առաջին անգամ կը գումարուի այս իրիկուն :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Բարձր Խորին երէկ գիշեր յոտուկ կառարաւմով Գահիրէ եկաւ և այս իրիկուն Ալեքսանդրիա կը վերադառնայ :

— Լոնտոնի թերթերը կը ծանուցանեն թէ եգիպտական կառավարութեան կողմէ թաղուհայն յորէլանի հանդէսներուն ներկայ գտնուած են Խորին եղբայրը՝ Բաճիս Մուսահամէտ Ալի , Տիգրան փաշա , արարողապետ

Սայիտ պէյ , Զիւլֆիքեար և Բաճիս Ալիզ պէյ : — Ճարտարագէտ Մարկոսօֆ պէյ հրաժարական տուած է Գահիրէի ջուրի ընկերութեան գեր-տնօրէնի պաշտօնէն :

— Լորա Գրոմբը յուլիս 14ին Անգլիա կողմերի , ամառնային արձակուողը անցունելու :

— Եգիպտական բանակին սպարապետ Քիշնէր փաշա երկուշաբթի օրը Ալեքսանդրիա երթալով Բարձր Խորին ներկայացաւ որուն մատոյց Սուլտանի յառաջիկայ արշաւանքին յատակագիծը ու հրամայտ տուաւ : Սպարապետը երեքշաբթի առտու՝ ընկերութեամբ Զօհրապ փաշայի Գահիրէ վերադարձաւ և այս իրիկուն ճամբայ կելլէ գէպ ի Տօնկօլա :

— Տամիէթի մօտ քանի մը օրէ ի վեր ձրկանները դործագուլ ըրած ըլլալով , շիթթու թիւներ ծագած էին որոնք ծանր հանգամանք մը առած ըլլալ կը թուին : Ներքին դարձող նախարարութիւնը հեռագրաւ հրահանգ տուաւ Տաքհաիէի ոստիկանաւետին՝ կարելի եղածին չափ ոստիկաններով շիթթութեան վայրն երթալ և ազգու միջոցներ ձեռք առնել : հրամայուած է միանգամայն Տամիէթի եղերապահ զօրքերուն՝ աշակցիլ ոստիկանութեան : Երէկ հասած հեռագիր մը կը հաղորդէ թէ զինուորներն հարկադրուել են զէնք պարպել խուլարայներուն վրայ որոնցմէ մէկ հոգի մեռելու ու քանի մը հոգի վիրաւորուելու են :

— Էլ-Թօր մաքրանոցին մէջ կիրակի օրը երկու հոգի մեռան ժանտախտէ : Ասոնք երկուքն ալ Եամաուէն եկող եգիպտացիներ էին , մէկը Շիպիլն չողենաւով որ ձիտուէ հանգիպած էր ու միւսը Բախմալիէ չողենաւով որ ուղղակի կուգար :

Ճիտուէի մէջ , ընդհակառակն , առողջական վիճակը բարելոքած է և երկու օրէ ի վեր ժանտախտի նոր դէպք ու մահ չէ պատահած :

— Եգիպտոսի առողջապահական վարչութիւնը երէկ առաւօտ գումարուեցաւ Ալեքսանդրիոյ պաշտօնատան մէջ , Տաքթ. Ռիսֆֆէի նախագահութեամբ և որոշեց հրահանգ տալ Էլ-Թօր մաքրանոցի քարանձինայի պաշտօնէութեան՝ իրենց հսկողութիւնն ու աշակրթութիւնը կրկնապատկել :

— Յունիս 11էն 17 Գահիրէի մէջ 342 ծնունդ պատահած է (178ը մանչ , 164ը աղջիկ) ու 400 մահ : Ալեքսանդրիոյ մէջ 198 ծնունդ (97ը մանչ , 101ը աղջիկ) և 231 մահ :

ԹՈՒՐԲԻԱ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ

Կիրակիէն ի վեր յաջորդաբար հասած քաղաքական լուրերը բնութիւն յառաւոր չեն՝ Կ. Պոլսոյ գեապանախորհուրդին բանակցութեանց յաջող ու հաշտարար կարգադրութեան մը յանգեւուն : Ընդհակառակն , երէկ գիշեր առնուած Ռիւդէրի կրկին հեռագրերու նայելով , ոչ միայն խզում մը առաջ եկած է Գրան ու գեապաններուն միջեւ , այլեւ Թեւադիոյ կողմն յարձակում մը տեղի ունեցել է թուրքերու և ալպանիացիներու կողմէ յոյներուն վրայ , ինչ որ մինչեւ իսկ կրնայ պատերազմի վերականգնել երկիրները պատճառել :

Աւստիկ այս առթիւ հասած հեռագիրները :

Կ. ՊՈԼԻՍ , 3 յուլիս . — Ոստ. նախարարաց խորհուրդը միաձայնութեամբ որոշեց պահպանել Թուրքիոյ իրաւունքները Թեսալիոյ վրայ :

5 յուլիս . — Գրան կողմ տեղի տնեցած անվերջ յետաձգումներուն պատճառով , գեապանները երէկ հաւաքական ծանուցադր մը տուին պահանջելով որ Թուրքիա վերջնական սրտում մը տայ սահմանադրուի մասին :

6 յուլիս . — Թուրք նախարարները մերժեցին համակերպիլ Տէրաթեանց հաւարական ծանուցադրին : Գրան ժառանգական պատառխանք՝ յանակցութեանց իրեն խզում մը վր նկատուի : Գեապանները կը խորհրդակցին : Մեծ-Եգիպտոսը յայտարարեց Սուլթանին իւր չի պիտի առարարէ երբէր համաձայնութիւն մը սրան հիմը կազմէ պատանոց կողմն առաջարկուած ռազմական սահմանագիծը :

ԼՈՆՏՈՆ , 6 յուլիս . — «Սթանտարտ» կիսմանց Ոթնէրէն թէ 2000 թուրքեր ու ալպանիացիներ յարձակում մը րբեր են Քալապարա գիւղին վրայ ի Թեսալիա . բնակիչներուն մէկ մասը լեռներն ապաստանած են : մնացեալները կամ ջարդուել և կամ գերի բռնուել են :

Ինչպէս կը տեսնուի , գեապաններուն հաւաքական ծանուցադրը , ամեն ատենուան պէս , «մեռեալ տառ» կը մնայ ու ընդդիմութեան կը բաղդի . իրենք առաջինն ըլլալու էին այս ճշմարտութիւնը գիտցողը :

Կրէտէի մէջ ալ , հորիզոնը մթին է միշտ ու կացութիւնն անորոշ . երբ մէկ կողմէ՝ Զուիցէրիայի վարչագէտ Նումա Տրօքի ընտրելութեան վրայ կը խօսուի կղզին կուսակալութեան պաշտօնին համար , միւս կողմէ՝ օտար ծովակալները , հաւատարիմ իրենց սկզբունքին , օամ գանձուն չահերը կը պաշտպանեն՝ ծովկորէն հեռացունելով այն սպունգ որացողները որոնք իրենց տուրքերը չեն վճարած ,

ՎԵՐՋԻՆ ՀՅՈՒՄԻՐՆԵՐ

ԱԹԷՆՔ , 6 յուլիս . — Բիւէի մէջ կուի մը ծագեցաւ ռուս զինով 6 սաւազներու եւ սեղացիներու մէջ : Նովային սպայ Պ. Նէլիսօֆ (Կ. Պոլսոյ ռուսական դեսպանին որդին) կուսարտները հանդարտեցնելու լուր միջոցին քեթի կեղծով վիրաւորուեցաւ :

ԼՈՆՏՈՆ , 6 յուլիս . — Լոնս Սալպուրի յայտարարեց Լոնսերու ժողովին մէջ թէ բանակցութեանց դանդաղութիւնը Գրան վերադառնի եւ ոչ թէ սեռութեանց : Մինչեւ իսկ հասկցունելու լուր որ 1878ին ռուսական բանակին ներկայութիւնն եւ հաշտութեան կնիւմը փութացնողը :

Ա Ջ Դ

Ռումանիոյ Ֆօթան Բալաֆի Հայոց Ազգ. երկսեւ վարժարանաց համար կուգուի Բալաֆիուս հայկաբան ուսուցիչ մը եւ սուսցունի մը , որք երբ գիտնան նաեւ գաղղիներէ՝ նախ սղաս կը հաւաքուին . առաջնոյն քաղիքն ըլլայ 30—35 եւ երկրորդին 25—30: Փափաքող դիմեն հանդերձ կ'սեւոր ծանօթութեամբ ի մասին իրենց անցեալ գործունեութեան առ F. S. Ferhatian à Focsani en Roumanie

ԿՕՇԻԿԷՆ ՎԵՐ ՍԻՐԱՀԱՐ

Հապարտութիւն միջազգային պատմաբան Անգլիոյ թաղուհայն յորէլանին առթիւ : Աւստիկ անոնցմէ հետաքրքրական հատ մը որ կապալուցանէ թէ սիրահարութիւնը ամօթ բան մը չէ , մինչեւ անգամ եթէ թագուհոյ մը հետ ըլլայ :

Շատ սրտաշարժ միտենոյն ատեն շատ ծիծաղելի է անգլիացիի մը՝ Պ. Հըննինկի պատմութիւնը զոր իր վեհապետուհոյն համար ունեցած սէրը գերեզման առաջնորդեց :

Հըննինկա հարուստ հողատէրի մը որդին էր որ Քէննինկուդենի պարտէզներուն մօտ կը բնակէր : Գրանըհինգ տարեկան եղած ատենը Քէնզի Վիլիթորիա դեռատի իշխանուհոյն կը հանգրկուէր ամեն օր , այնպէս որ բուն կերպով սիրահարեցաւ անոր : Ոստիկանութիւնը լուր առնելով ստապիկ հսկողութեան տակ առաւ այդ երիտասարդ սիրահարը ,

խոյս քիչ յետոյ համոզուելով որ Հրենիկս գէշ զիտաւորութիւններ չունէր, այլ եւս չգրաւեցաւ այդ սիրահարութեամբ :

Հրենիկս որ սիրողները կը շատանայր — ամեն անգործ սիրահարի պէս — իր սիրուհւոյն պատու հաններուն տակ պտտելով, սկսաւ քիչ գտնել այդ վայելքը . հետեւեալ իշխանուհւոյն շուրջը սկսաւ սկսաւ . երբ ապագայ թագուհին սիրտէկին մէջ պտտելու կելլէր, մեր երիտասարդ սիրահարը ետեւէն կերթար, բովէն կանցնէր և շարունակ կը դիմաւորէր : Իշխանուհին կը կարծէր թէ մուրացկանի մը հետ էր գործը . խոյս իր սիրայէ հասկցաւ այն օրը ուր անմանօթը շրտականանալով իրեն հետեւի իր հետիտուն պտոյտներու մէջ, կատաբով ալ դուրս ելած ատենը Հրենիկսի փառաւոր և իրենին յար և նման կառքի մը մէջ իրեն ետեւէն գալը տեսաւ : Երկու կառքերու մէջ զինանշանի տարբերութիւն մը կար միայն : Իշխանուհին բարկացաւ այդ յարատեւ հալածութեն և հրամայեց որ այդ մարդը հեռացնեն իր քովերէն :

Այն ատեն Հրենիկս զիւրազնորէն միտքը դուրս նամակով մը իր սէրը յայտնել գեղանի սիրուհւոյն . և այդ նպատակով երկուող մը գրեց գաւհաժառանգ իշխանուհւոյն և անոր ձեռքը խնդրեց : Այդ նամակը բնականաբար իր հասցէին չէր կրնար հասնիլ, — ամենուն տրուած չէ տրայտական ընտանիքի աղջիկներու հետ սիրարանել . բայց այս բանը չի վնասեցուց մեր բարեկամը որ շարունակեց նախնական վրայ գրել : Այս անխախտ յարաբերութիւնը իր աղիւնքը ունեցաւ սակայն : Օր մը թղթաբերը Վիդորիա ստորագրուած նամակ մը բերաւ իրեն, որով իշխանուհին ցաւ ի սիրտ կը յայտնէր թէ թէեւ իր զգացումներուն մասնակից կըլլար, բայց քէնդի դատուհին — իր հօրաքոյրը — արգելքներ կը յարուցանէր այդ անուանութեան դէմ : Կը խնդրէր ուրեմն որ քիչ մը ատեն հանգիստ . և կերպով որ իրմէ զատ ուրիշի մը աչք չունէր, բայց առ այժմ կը թոյլատրէր իրեն հետ թղթակցիլ պայմանով որ իր նամակները պարտէկին մէկ անկիւնը բերէր դնելու, ուր ինքը անձամբ պիտի երթար առնել : Հրենիկսի մտքին երբէք չէր կրնար անցնիլ թէ այդ նամակը պարզապէս կատակասէրի մը գործն էր . ամիսներով շարունակ այդ տեսակ նամակներ կ'ստանար, որոնք սիրազգիւտ տողեր կը պարունակէին : Այդ նամակները խեղճին խելքը գլխին տալին : Երբ Վիդորիա իշխանուհին Բրիտանական զաւին վրայ բարձրացաւ, խեղճ սիրահարը հիանալի նամակ մը գրեց անոր ուղեւալ որուն մէջ կըսէր թէ « Կատարատէր էր իր սէրը նուիրագործել արքայական սթոպին վրայ : Այդ միջոցին կ'սկսէր իր անգարաններ խեղճութիւնը :

Օր մը, բարեգործական պաշտօնի մը մէջ, Հրենիկսի ներս մանկէն առաջ Վիդորիա թագուհւոյն մէկ ձեռագործը ծախուած էր . տոտր վրայ այնքան կատուեցաւ, որ հարկ եղաւ բանաշարիկ մը անցնել խեղճարին վրան : Ատկէց ետքը ալ լայն լողին փախուց և ցաւալի վիճակի մը մէջ ինկաւ :

1839ին մեռաւ Հրենիկս այն պահուն ուր Վիդորիա թագուհին կը նշանուէր Սաքս-Գոթարկի Աւստրիայ իշխանին հետ :

ՏՕՔԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ կանանց, ստամոքսի, մորթի եւ ջրային հիւանդութեանց : Կ'ընդունի իրեն դիմող հիւանդները Մեզոն Զահար, Շեքիքոս Զօրէի հիւր գէմը . ամեն օր առաւօտեան ժամը 10էն 12 եւ կէս օրէն վերջ 3էն 5: Բոլոր վկայեալ աղբաւթի կը դարմանուին :

ԲԻԻԶԱՆԴ ՓԱՓԱՋԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Պատու ունին ծանուցանել արդոյ հասարակութեան թէ Պաշար Մուրուրի մէջ խանութ մը բացած են ուր ընտիր տեսակէ և ծեծուած խահվէ պիտի ծախուի սովորական գներով :

Այս խանութին մէջ կան նաեւ զովա-ցուցիչ ըմպելիներ :

Le Gérant: HENRY SAKAKINI

Տպագրութիւն ՓԱՐՈՍ Երզրի

3. ԵՒ 4. ՄԱԹՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ

ԳԱՀԻՐԷ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԳՐԻՒՄ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ՍԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԿԱՆԷԹԻ

ՍԵՍԱԳՈՅ ԳՈՐԾԱՐԱՆ

Ընդհանուր Մթերանոց «Շարա Ազպաֆ»

Խառն Դասարաններու դէմ :

ԸՆԹԱՑԻԿ ԴԻՆ ՍԻԿԱՆԷԹՆԵՐՈՒ

Սիկարէթ Ռուսեալ 1000 հատը 2 1/2 Անգ. ոսկի

»	Խըտիվեալ	»	»	2	»	»
»	Պաշարական	»	»	1 1/2	»	»
»	Պոհճա	»	»	1 1/4	»	»
»	Նաթիւրէլ	»	»	1	»	»
»	Փօռ	»	»	20	Փրանք	

ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆ

ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Հայ եկեղեցւոյ դէմ բացած խանութին մէջ ամենէն գթաւարահաները գոհացնելու

եղանակաւ կ'արդուէ շապիկներ և այլն սովորական գներով :

Ուզողներու համար լուացարարութեան ճիւղ մ'ալ աւելցուած է, ուր յաճախորդներուն ճերմակեղէնները զատ զատ լուարու գնահատելի գրութիւնը հաստատած է :

Ի գիւրդիւն յաճախորդաց ճերմակեղէնները ինք անձամբ պիտի առնէ տուներէն և պիտի վերադարձնէ :

ԱՐՈՂՋՈՒԹԻՒՆ, ՈՅԺ, ԿՈՐՈՎ

ԴԱՐՄԱՆ ԱՆԱՐԻՒՆՈՒԹԵԱՆ, ՏԿԱՐՈՒԹԵԱՆ, ԵՒ ԶՂԱՅԻՆ ՇԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

ԼԸ ՊԻՕԺԵՆ

Միակ սնունդ նորաբոյժ հիւանդներու համար, կազուրիչ սրտի, շնչառական գործարաններու, արեւն եւ ջրային հիւանդութիւններու :

Կը յանձնարարուի հեծեղանի գործառններուն : Սեանքի դեղ ոյժի պէտք ունեցողներուն համար :

ԿԸ ԴՏՆՈՒԻ ԱՄԵՆ ԴԵՂԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Մթերանոց. — Ա. ՄԱՆՏՕՅԻԱՒ ԱՆԿՅՈ—

Եզրայական դեղատանը Էզպէֆիէ, Դահիւրէ :

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵՒԵՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԳՐԻՒՄ ԳԻԾ

Գ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Դաս	Սկիզբ	Կէս տ. Գ	Սկիզբ	Կէս տ. Գ	Դաս	Սկիզբ	Կէս տ. Գ	Դաս	Սկիզբ
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանթա	»	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
Թանթա	»	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	»	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Աղեքսանդրիա	»	6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆԳՐԻՒՄ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Գ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Դաս	Սկիզբ	Կէս տ. Գ	Սկիզբ	Կէս տ. Գ	Դաս	Սկիզբ	Կէս տ. Գ	Դաս	Սկիզբ
Աղեքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9
Թանթա	»	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
Պէնհա	»	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Գահիրէ	»	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	»	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷՋ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲՅՑ

ՍԻԻԷՋ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆԻ		ԱՌԱՐՈՏ	ԵՐԵՎԱՆ	ԿԱՅԱՐԱՆԻ		ԱՌԱՐՈՏ	ԵՐԵՎԱՆ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէզ (բարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա)	ժամ.	12 28	7 48	» կոյարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53		»	երեկոյ	
Զակադիկ)	ժամ.	1 34	8 54	Զակադիկ)	ժամ.	3 7	8 53
	մեկ.	1 44	9 4		մեկ.	3 17	
Խամաիլիա	մեկ.	3 40	1 —	Պէնհա)	ժամ.	4 13	9 47
Սիւէզ կոյարան	ժամ.	—	5 —		մեկ.	4 17	
Տօք (բարափ)	ժամ.	6 55	—	Գահիրէ	ժամ.	5 5	10 35